Glendale Water & Power
141 North Glendale Ave., Level 2
Glendale, CA 91206

Հովհարային անջատումների և հոսանքազրկման մասին լրացուցիչ տեղեկությունների համար սկանավորեք այս QR կոդը կամ այցելեք՝ **GlendaleCA.gov/RollingOutages**

Այս ծանուցումը հայերեն դիտելու համար սկանավորեք այստեղ:
Escanee aquí para ver este aviso en español.

Մենք բարձր ենք գնահատում ձեր ըմբռնումն ու համբերությունը, եթե դուք տուժեք անջատումներ պատճառով: GWP-ն Ամերիկյան հանրային էներգիայի ասոցիացիայի կողմից նշանակված հուսալի հանրային էներգիա մատակարարող է և ճանաչված է հուսալիության և էլեկտրաէներգիայի վերականգնման հարցում բարձր արդյունավետություն ցուցաբերելու համար: Ձեր անվտանգությունը կարևոր է մեզ համար, և մենք ձգտում ենք պահպանել հուսալիությունը և ապահովել, որ մեր հաճախորդների էլեկտրաէներգիան միշտ արդյունավետ և անվտանգ վերականգնվի:

@COGWaterPower @GlendaleWaterandPower @GlendaleWaterandPower

PROVIDING RELIABLE POWER TO GLENDALE

Հուլիս 2024

2024թ. ամռան ամիսներին էլեկտրաէներգիայի անջատումներին նախապատրաստվելու մասին տեղեկություններ

Գլենդելի ջրի և էլեկտրականության ծառայության հարգելի՛ հաճախորդ,

Գրեյսոնի էլեկտրակայանը, որը հավատարմորեն ծառայել է Գլենդելին՝ ավելի քան 80 տարի տեղական էլեկտրաէներգիա տրամադրելով, շահագործումից հանվել է՝ ճանապարհ բացելով Գրեյսոնի նոր էներգետիկ կենտրոնի համար, որը կառուցվելու է Գլենդելի արագ աճող էներգետիկ կարիքները սպասարկելու նպատակով: Թեև այս նախագիծն անհրաժեշտ է մեր էլեկտրաէներգիայի արտադրության երկարաժամկետ հուսալիության համար, այն կարող է ժամանակավոր դժվարին իրավիճակներ ստեղծել, որոնք, հնարավոր է, հանգեցնեն էներգիայի պակասորդի առաջիկա երկու տարիներին, հատկապես ամռան ամիսներին: Ծրագրի այս ծայրահեղ կարևոր փուլում սահուն անցում ապահովելու նպատակով մենք խնդրում ենք ձեր աջակցությունն ու համագործակցությունն այս աճող պահանջարկի ժամանակ:

Բարձր ջերմաստիճանները և ջերմային ալիքները մեծացնում են հովացման և օդորակման պահանջարկը, ինչը լրացուցիչ ծանրաբեռնում է էներգետիկ համակարգը: Գլենդելն ակտիվ միջոցներ է ձեռնարկում հնարավոր խնդիրները մեղմելու և էներգիայի հուսալի մատակարարումը պահպանելու համար: Այնուամենայնիվ, եթե մենք ունենանք շարունակաբար բարձր ջերմաստիճաններ ցերեկները, իսկ երեկոյան այն չի զովանա, մենք կոչ կանենք մեր հաճախորդներին խնայել էներգիան, երբ հնարավոր է, և կուղարկենք պիկ ջերմաստիճանների ահազանգեր: Առանց էներգիայի խնայողության, մենք, ամենայն հավանականությամբ, կդիմանանք հովհարային անջատումներին այս ընթացքում:

Թեև մենք չենք կարող հստակորեն կանխատեսել ծայրահեղ ջերմային երևույթները, այդուհանդերձ, պարտավորվում ենք պլանավորել և պատրաստվել նվազագույնի հասցնել էլեկտրաէներգիայի հնարավոր խափանումները: Մեր ծառայության առաջնահերթությունը լույսերը վառ պահելն է և այս ծայրահեղ շոգ իրադարձություններին նախապատրաստվելիս հուսալի մնալը:

Ի՞նչ կարող են անել հաճախորդները Peak Alerts-ի ժամանակ:

Էներգիայի պահպանման խորհուրդներ.

- Կարգավորեք օդորակման թերմոստատները 78 աստիճանի վրա, երբ տանն եք գտնվում, և 80 աստիճան, երբ տանը չեք՝ նկատի ունենալով ընտանիքի անդամների և ընտանի կենդանիների անվտանգությունը:
- Անջատեք ավելորդ լույսերը և անջատեք չօգտագործվող սարքերը/սարքավորումները:
- Գնեք «սմարթ» թերմոստատ՝ ձեր հեռախոսի կամ պլանշետի միջոցով ջերմաստիճանը կառավարելու համար և գրանցվեք մեր «Պիկ խնայողությունների պահանջարկի արձագանքման ծրագրին»՝ այցելելով **GWPPeakSavings.com**
- Խուսափեք էներգատար սարքեր օգտագործելուց, ինչպիսիք են սպասք լվացող մեքենաները, լվացքի մեքենաները, չորանոցները կամ էլեկտրական մեքենայի լիցքավորումը՝ մինչ երեկոյան ժամը 9:00
- Փակեք բոլոր շերտավարագույրները և վարագույրները՝ սենյակները զով պահելու համար:
- Օգտագործեք առաստաղի օդափոխիչներ կամ անձնական օդափոխիչներ, երբ հնարավոր է: Օդափոխիչները զովացնում են մարդկանց, ոչ թե՝ դատարկ սենյակները:
- Հնարավորինս խուսափեք զազօջախը կամ վառարանն օգտագործելուց՝ ձեր տունը զով պահելու համար:

GWP-ն ունի էներգաարդյունավետության և պահանջարկի արձագանքման ծրագրեր, որոնց հաճախորդները կարող են մասնակցել. դրանք խթանում և խրախուսում են էներգիայի խնայողությունը: Ծրագրի մասին տեղեկությունների համար այցելեք ստորև նշված հղումներով:

Բնակիչների համար ծրագրեր
GlendaleCA.gov/ResidentialPrograms

Բիզնես հաճախորդների համար ծրագրեր
GlendaleCA.gov/BusinessPrograms

Սկանավորեք այս QR կոդը՝ տեղեկություններ ստանալու և թե ինչպես գրանցվել մեր Պիկ խնայողությունների պահանջարկի արձագանքման ծրագրում՝ բնակիչների և բիզնես հաճախորդների համար:

Հասկանալ և պատրաստվել հոսանքի անջատումներին

Կարևոր է իմանալ հոսանքի հովհարային և կանոնավոր անջատումների միջև եղած տարբերությունը: **Հովհարային անջատումների** ժամանակ մենք, որպես համայնք, պետք է նվազեցնենք էլեկտրացանցերի լարվածությունը՝ վերահսկելով էներգիայի ծանրաբեռնվածությունը և պահանջարկը: Հետևաբար, մենք չենք կարող հաճախորդներին ժամանակից շուտ տեղեկացնել, որ նրանց հոսանքն անջատվելու է: Եթե ձեզ մոտ հովհարային անջատում լինի, ձեր հոսանքը հավանաբար կմիանա և կանջատվի 60 րոպեանոց ընդմիջումներով: Երբ ձեր հոսանքն անջատվի, այն կվերադառնա 60 րոպեից: Կախված էներգիայի ծանրաբեռնվածությունից՝ մեկ օրվա ընթացքում հնարավոր են բազմաթիվ հովհարային անջատումներ:

Բարձր ջերմաստիճանների դեպքում միշտ կա **էլեկտրաէներգիայի անջատման** հավանականություն, որը պայմանավորված է սարքավորումների գերբեռնվածությամբ կամ գերտաքացումով: Էլեկտրաէներգիայի կանոնավոր անջատումները կարող են տևել քսան րոպեից մինչև վեց ժամ՝ կախված սարքավորումների խափանման տեսակից և պահանջվող վերանորոգումից:

Պատրաստ եղեք ցանկացած տեսակի անջատումներին

- Ձեռքի տակ ունեցեք լապտերներ և լրացուցիչ մարտկոցներ
- Հեռախոսների և պլանշետների համար լիցքավորեք արտաքին մարտկոցներ
- Շատ ջուր պահեք մոտակայքում
- Պահպանեք ձեր սառնարանի սառեցման կարողությունը՝ դուռը փակ պահելով
- Ստուգեք առցանց՝ քաղաքի հովացման կենտրոնների տեղակայման համար

Տեղեկացված եղեք պիկ ջերմաստիճանների ահազանգերի և խափանումների մասին՝ GWP-ից

- Գրանցվեք անջատումների մասին տեքստային ծանուցումներին **GlendaleCA.gov/OutageTextAlerts**
- Ցանկացած պահի մեր կայքում ստուգեք անջատումների վերաբերյալ քարտեզն իրական ժամանակում **GlendaleWaterandPower.com**
- Հետևեք մեզ՝
  - **COGWaterPower**
  - **GlendaleWaterandPower**
  - **GlendaleWaterandPower**
- Գրանցվեք մեր From the Source տեղեկագրին: Մենք կօգտագործենք ձեր էլ.փոստը՝ ձեզ կարևոր տեղեկություններ և թարմացումներ ուղարկելու համար: **GlendaleCA.gov/FromTheSource**
- Թարմացրեք ձեր կոնտակտային տվյալները մեր՝ հաճախորդների սպասարկման բաժնի հետ՝ զանգահարելով **(855) 550-4497**

Ցանկացած արտակարգ իրավիճակի դեպքում զանգահարե՛ք 911: